

ՄԱՐԶԻ ԳԵՂԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77¹, 77², և 77³ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Գեղաքար համայնքի ղեկավարին՝
 - 1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել պետական լիազոր մարմին՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման.
 - 2) «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.2-2/ թափուր պաշտոնը համալրել մրցութային կարգով կամ սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից այն հանելու համար.
 - 3) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով ավագանու որոշմամբ ուժը կորցրած ճանաչել ավագանու 2010թ. մարտի 20-ի N 2-րդ նիստի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» N 4 որոշումը.
 - 4) պահպանել ավագանու նիստերի գումարման «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարբերականությունը.
 - 5) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը /որոշումներ, կարգադրություններ, հրամաններ/ համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ, 40-րդ, 41-րդ հոդվածների պահանջներին.
 - 6) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 33-րդ հոդվածների պահանջներին համապատասխան հաստատել և գործողության մեջ դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահության ներքին կանոնները.
 - 7) համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի և տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան.
 - 8) հաստատել և գործողության մեջ դնել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը նոր խմբագրությամբ.

- 9) հաշվապահական հաշվառումն իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.
- 10) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հոկտեմբերի 20-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ